ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2024 թվականի N 258 - Ա

«ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, 8-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածը, 13-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հիմնադրման միջոցով ստեղծել «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Սահմանել, որ՝

1) կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

ա. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ պետական մարմիններ) տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց հետ փոխկապակցված համակարգերի կառավարում՝ նախագծում, մշակում, ծրագրավորում, ներդրում, այլ գերատեսչությունների հետ տվյալների փոխանակում, սպասարկման հետ կապված աշխատանքների կատարում և ծառայությունների մատուցում կազմակերպության ռեսուրսներով կամ պայմանագրային հիմունքներով այլ

ընկերությունների միջոցով, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված այլ գործառույթների իրականացում,

բ. պետական մարմիններում տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց հետ փոխկապակցված համակարգերի մշակման և կառավարման արդյունավետության բարձրացում և դրա հետ կապված մատուցվող ծառայությունների հասանելիության ընդլայնում և դյուրացում:

3. Թույլատրել կազմակերպությանն իրականացնել իր կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեություն՝ պետական մարմինների համար տեղեկատվական ծառայությունների մատուցում, ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում:

4. Կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմին ճանաչել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին: Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին վերապահել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված, ինչպես նաև կազմակերպության մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչություններ ստեղծելու լիազորությունները:

5. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝

1) հաստատել կազմակերպության կանոնադրությունը և ապահովել սահմանված կարգով կազմակերպության պետական գրանցումը.

2) հաստատել կազմակերպության աշխատողների թիվը, հաստիքների քանակը և անվանացանկը.

3) հաստատել կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը և արժեքը.

4) ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 702-Լ որոշման

մեջ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

6. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշման մեջ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

7. Կազմակերպության պետական գրանցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ